

ԽՈՒՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՆՎԵՐՈՒՄ

ԲԱՅԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳԻ ԶՈՒԳԱԶԵՒՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՍԱՅԻ ՆԱՄԱՆ-ՋԱԼԱՅԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐՈՒՄ

ԺԸ դարի առաջին քառորդի հայ ազգագրական շարժման նշանավոր ներկայացուցիչ, ազգային ու քաղաքական գործիչ, Աղվանից Կաթողիկոս, հոգևոր ու աշխարհիկ իշխանության գլխավոր առաջնորդ Եսայի Նասան-Ջալալյանցի մասին պատմական պեղելություններ ենք ստանում իր իսկ գրած թուղթ-նամակներից: Դրանք ուղղված են ժամանակակից արքունիքին, մասնավորապես ցար Պետրոս Առաջինին, վրաց թագավոր Վախթանգ Վեցերորդին, հոգևոր հայրերին ու ազգագրական շարժման մասնակիցներին: Մեր ուսումնասիրած գրքում ընդգրկված են Կաթողիկոսի ընդամենը քսան նամակ (նամակներից մի քանիսը ժամանակում չեն), որոնք գրված են 1702-1726 թթ.¹:

Ի պայրերություն «Պապություն համառոտ Աղուանից երկրի» երկի՝ Եսայի Նասան-Ջալալյանցի նամակները գրված են ազգաբանական, անկաշխան, անմիջական ձևով: Այդ ճանապարհով նամակագիրը փոխանցել է իր ասելիքը՝ բացահայտելով իր գաղափարները, ինչու է՝ անձնական կյանքն ու միջավայրը: Այդ նամակներից յուրաքանչյուրը պատմական իրողությունը հասարակական փաստաթուղթ է: Շուրջ երեք տասնամյակ ընդգրկող նամակները, այդ շրջանի քաղաքական անցողիկ և ներկայացնող արժեքավոր վավերագրեր լինելուց բացի, աչքի են ընկնում նաև ժամանակի լեզվական առանձնահատկություններով: Նամակների լեզուն միջնադարի գրաբարն է՝ գուցե ավելի ժամանակակից բարբառային, ժողովրդական-սակցական լեզվական ազդեցություններով և վաղ աշխարհագրական բնորոշ բառապաշարով ու բառային, քերականական դրսևորումներով:

Իր Պապությունը և նամակները Ջալալյանցը գրել է մի շրջանում, որը հայագիտության մեջ համարվում է նոր գրական լեզվի կազմավորման շրջան, թեև պետք է նկատել, որ նոր գրական հայերենի առանձին նմուշներ արձանագրվել են դեռևս ԺԴ-ԺՋ դարերի գրական հուշարձաններում: Սակայն այդ երևույթն առավել համարարած է դարձել ԺԷ-ԺԸ դարերից սկսած²:

1 Տե՛ս Տ. Եսայի Նասան-Ջալալյանց, Պապություն համառոտ Աղուանից երկրի, Սյուրբանակեր, 2007 (այսուհետ կնշենք միայն էջը): Եսայի Նասան-Ջալալյանցի որոշ նամակներ գրել ենք Մարտինա Մարտինյանի մի քանի ձեռագիր մատյաններում և Կ. Եզյանի ու Ա. Գ. Արքայանյանի ժողովածուներում:

2 Տե՛ս Վ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 441-445:

ԺԷ դարի սկզբից մինչև ԺԹ դարի կեսը Գ. Ջահուկյանի բնորոշմամբ վաղ աշխարհաբարյան ենթաշրջանն է՝³ «որոշ միասնականացնող պենդենցներով, որոնք էլ հենց հիմք են պալիս ընդհանուր լեզվի և նրա կողմից գրաբարի՝ որպես գրական լեզվի, ֆունկցիաները սահմանափակելու համար»⁴:

Ու, Իշխանյանը ԺԷ դարը համարում է ոչ միայն երրորդ գրական հայերենի, այլև նոր շրջանի հայ բարբառների առաջին դար՝:

Ս.Ղազարյանը այս դարերի աշխարհաբարի հիմնական առանձնահատկություններ է պետում՝ ա) գրաբարյան նախորդների գործածության թուլացումը, բ) բարբառների խիստ ազդեցությունը գրական լեզվի վրա, գ) բարբառով գրականություն ստեղծելու միտումը և դ) պարբեր հեղինակների, երբեմն էլ նույնիսկ միևնույն հեղինակի երկերում լեզվական տարբեր իրողությունների՝ բարբառների, գրաբարի ու միջին հայերենի իրականությունների անխտիր կիրառությունը⁵:

Այսպիսով՝ Եսայի Նասան-Ջալալյանցի նամակների լեզվում առկա գրաբարի, միջին հայերենի, բարբառների և աշխարհաբարյան ձևերի գուգահեռ գործածությունը մեզ թույլ է տալիս ասելու, որ դրանցում վաղ շրջանի արևելահայերենի լեզվական իրողությունների մասնակի դրսևորումներ կան:

Անցնելով բուն նյութին՝ նամակներում բայաձևերի ուսումնասիրությանը, նպատակահարմար ենք համարում այն կատարել երկու ձևով՝ ա) դերբայների գործածություններ, բ) եղանակաժամանակային ձևերի առանձնահատուկ դրսևորումներ, որոնք իրենց հերթին ներկայացնում ենք հետևյալ գուգահեռներով՝ 1) վաղ աշխարհաբարյան ձևեր, 2) գրաբարյան կազմություններ, 3) խոսակցական լեզվի ազդեցություններ ու բարբառային ձևերի ներմուծումներ:

Եսայի Նասան-Ջալալյանցի Նամակների լեզվին բնորոշ են՝

ա) քերականական նույն իմաստը բազմազան ձևերով արտահայտելու միտումը,

բ) նկարելի են գրական լեզվում եղած անկանոնություններ, որոնք մասնավորապես դրսևորվում են բայական համակարգում՝ պայմանավորված բայի քերականական հատկանիշների և իմաստների բազմազանությամբ,

գ) բայական իրողությունների քննությունը ցույց է տալիս, որ արդեն ի հայտ են գալիս աշխարհաբար գրական հայերենի խոնարհման համակարգի յուրահատկություններ՝ խոնարհման քիպերի, լծորդությունների փոխանցումներ, պարզ և ածանցավոր բայերի գործածություններ, խոնարհման նոր ձևերի առկայություն և այլն:

Գրաբարյան չորս լծորդությունների (-ել, -իլ, -ալ, -ուլ) գործածությունը հավասարաչափ չէ. Ե և Ա լծորդների համեմատությամբ Ի-ն և Ու-ն սահմանափակ կիրառություն ունեն: Ի դեպ՝ Ու-ով միայն մեկ բայ է հանդիպում՝ առնուլ, և գուգահեռությամբ՝ առնել, Ի լծորդությամբ՝ զերծանիլ, ապստամբիլ, բնակիլ, բերիլ,

ունիլ, լինիլ, հնազանդիլ, գրուիլ, մերիլ (կնքել, զմռսել), որոնց մեծ մասը, մեր կարծիքով,

3 Տե՛ս Գ. Ջահուկյան, Նայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 49:

4 Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 50:

5 Տե՛ս Ու. Իշխանյան, Նոր գրական հայերենը 17-18-րդ դարերում, Երևան, 1979, էջ 18:

6 Տե՛ս Ս. Ղազարյան, Նայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954, էջ 375:

ձևավորված է բանավոր-խոսակցական և բարբառային լեզվի ազդեցությամբ: Առավել հաճախակի են գործածվում **Ե** և **Ա** լծորդության պարզ և ածանցավոր բայերը՝ գիտել (գիտե-նալ, հասկանալ), փորել, խնամել, ելանել/ելնել, հարկանել (խփել, ծեծել), յուսալ, բանալ, կա-մենալ, ընթանալ, մոտենալ, սրանալ և այլն:

Նկատելի են նաև միեւնույն բայի փարբեր լծորդություններով զուգաձեռնություններ: Ինչ-պես՝

Զուգաձեռնություններ	Օրինակներ
ե // ի	լինել//լինիլ, ունել//ունիլ, գրել//գրուիլ, հնազանդել//հնազա- գանալիլ, բերել//բերիլ
ու// ե	առնուլ//առնել
ե//ի//ու	առնել//առնիլ//առնուլ

Այս զուգաձեռնություններից գրել//գրուիլ, հնազանդել//հնազանալիլ բայերն ունեն սեռային փարբերակվածություն՝ գրուիլ= գրվել, հնազանալիլ=հնազանդվել: Օրինակ՝ «...թե՛ ամենայն կողմանց որ մի ըստ միտջե՛ չե՛ գրուիլ... » (161): «...մենք յոժար սրբի... պատրաստ կամք առ ի հնազանալիլ և ընդունել գիրամանն արքունի...» (156-157):

Նամակներում բայ խոսքի մասն ունի համադրական և վերլուծական դրսեորումներ, ու-շագրավ են հատկապես բայական հարադրությունները: Ջալալյանցի գործածած հարադիր բայերը կազմությամբ և բառային իմաստներով բարբառային ազդեցության հետևանք են, իսկ մի քանիսը գրաբարյան կազմություններ են: Նարադիր կազմություններում անվանական բաղադրիչը փոխառյալ է (արաբերենից, թուրքերենից, պարսկերենից), իսկ բայական բա-ղադրիչը հայերեն բայ է: Բերենք օրինակներ (փակագծում նշում ենք էջը, բացառությունը և գործածության վայրը)⁷՝ հափս արի (146, բանաբարկեցի, Կարինի, Մոկսի, Վանի և այլ բրբ.) դամջի փալ (146, մարակել, Կարինի, Արարաբյան, Ղարաբաղի բրբ.), զնճիլն փրի (146, շղթայել, Նոր Բայազետի, Կարինի բրբ.), թաղավուլ փուի (148, թաղափ՝ ուժ, թափ փալ, Ղա-րաբաղի, Գանձակի բրբ.), աշքար արի (150, պրսկ., հայտնի դարձնել, ցույց փալ, Ղարաբա-ղի բրբ.), սիահի արի (147, սիահ՝ սեւ, սեւ անել, Նոր Նախիջեւանի բրբ.), էլջի կարգեալ (161, թուրք., հարկահավաք, դեսպան նշանակել, Վանի բրբ.), միրիլ փալ (163, միրել՝ կնքել, զմոսել, Արարաբյան և Թբիլիսիի բրբ.), ազար առնել (162, ազարել, բաց թողնել), արզ լինի (196, արաբ., թուրք., խնդրել, առաջարկել), խաթրջամ լինենք (170, արաբ., ապահով, վստահ լինել, Արարաբյան, Թբիլիսիի բրբ.), իխարիար ունես (170, հավանաբար նկարի ունի իխարիպար, էիթիպար՝ պարիվ, հարգանք, վարկ, Արարաբյան, Ղարաբաղի, Ուրմիայի բրբ.), իքմին փվի (195, իքմըն՝ որեւէ բան փալ, Նոր Ջուղայի բրբ.), շափաղաթ լինի (181, փայլել, շողալ, Մեղ-րիի, Թբիլիսիի բրբ.), մուշավարա արի (148, գրուցել, խորհրդակցել, բարբառի վայրն անհայտ է) և այլն: Կան նաև գրաբարյան կազմություններ՝ խանկարեալ կան (166), մաքառեալ կան (165), յայարնի առնենք (170), դիմադարձ լինիլ (162) և այլն:

ա) Դերբայների գործածություններ:

Նկատելով նամակների դերբայական ձևերի կիրառություններին՝ նկատենք, որ դրանցում գործածված են՝

7 Տե՛ս «Նայոց լեզվի բարբառային բառարան», հր. Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Երևան, 2001-2010: Տր. Անտոնյան, Նայերեն գաղաղական բառարան (Դմիտրյան ազգագրական ժողովածու), հր. Թ., Թիֆլիս, 1913 (բերված բոլոր բացառությունները ստուգել ենք այս բառարաններով):

1) գրաբարի բոլոր դերբայները՝ անորոշ (-ել,-իլ,-ալ,-ուլ), ապառնի(-ոց եւ-ի), անցյալ(-եալ), ենթակայական կամ ներկա (-ող/-օղ(<աղ)) :

2) միջին հայերենում ու բարբառներում ձևավորված եւ այդպեղից աշխարհաբարին փոխանցված -ու-ով՝ ապառնի դերբայը, -ել-ով՝ վաղակադարը, -ած-ով՝ հարակադարը:

3) Ում ճյուղի բարբառներին բնորոշ -ում եւ -իս-ով անկադարի կազմությունը, որոնք նամակներում մեծ թիվ են կազմում՝ լսում (171), խոսում (171), քննում (171), ուզում (171), գնում (183), ասում (183), հարում (161), ողարկում (181), լսելիս (150), գալիս (183), քալիս (185):

Ի դեպ, հայագիտությունը ում-ով անկադարի ծագումը կապում է ներգոյական հոլովի հետ⁸, սակայն այդ փաստակերպը միասնական չէ եւ բազում փարակարծությունների փոխարին է փոխվում:

Անորոշ դերբայը հոլովվում է ո հոլովիցով, միայն եզակի թվով: Դրսեւորելով անկախ կիրառություն՝ նախադասության մեջ հանդես է գալիս շարահյուսական փարբեր պաշտոններով խնդրային, պարագայական, ինչպես նաեւ կարող է բայական բաղադրյալ ստորոգյալի մաս լինել: Այսպես՝ «Իսկ դուք պարսիք ձեր գամենայն որպիսութիւնն առ մեզ գրել» (145): «Եւ դուք պարսիք առաւել քան զկար ձեր հնազանդել առաջնորդաց ձերոց» (145): «...եւ յայս կողմ ընթանալոյ դիտարութիւնն ձեր եւս լուսաք...» (194):

Անորոշի գործիական հոլովաձեւը հիմնականում հանդես է գալիս ձեւի պարագայի պաշտոնով. «Իսկ մենք որք մնացեալքս երբեմն կովելով եւ երբեմն հաշտութեամբ հազիւ ...մնացեալ կամք» (166), «...այլ զքո ամենայալոյ գորութիւնդ եւ օգնութիւնդ յուսարով, ապաւինիմք եւ համբերեմք սպասելով» (181):

Ապառնի դերբայը կազմվում է գրաբարաձեւ՝ -ոց եւ -ի մասնիկներով, ինչպես՝ յայտնելոց (151), գրելոց եւ (164), լինելոց է (161,197), յամելոց իցէ (166), իսկ -ի-ով երկու դեպք է վկայված՝ լսելի (160) եւ սիրելի/ք/ (144,145): Վերջինս գործածված է հոգնակի թվով. «Ահայ սիրելիք մեր որպիսութիւնն մեր» (145): Երկու օրինակ էլ հանդիպում է -ու-ով՝ գալու (182,191,195) եւ գնալու (164,194), որը աշխարհաբարյան երևույթ է՝ «...զի գրես, թէ գալու եմ քեզ առնուր եմ անելոյ» (194): «Ես եւս գարունս գնալու եմ Էջմիածին եւ զոր ինչ անար որպիսութիւն լինի գրելոց եմ քեզ» (164): Վերջին երկու նախադասություններում գալու եմ/եմ անելոյ եւ գնալու եմ/գրելոց եմ գուցա հեռ ձեռք եւ: Սրանցից -ոց մասնիկով ապառնին կախյալ է, կազմում է գլխավոր բաղադրյալ ժամանակաձեւեր: Օրինակ՝ «...եւ ինքն եւս ականաւրես եղեւ ամենայն որպիսութեանց քեզեացս, զոր յայտնելոց է առաջի մեծի թագաւորութեանդ» (151): «...եթէ զգալուս քոյ յամելոց իցէ, փութանակի մեզ գոր ի թիկունս հասոյ» (166):

Ենթակայական (ներկա) դերբայը հայերենի բոլոր շրջաններում կազմվում է ող/օղ վերջավորությամբ, որը դրվում է անորոշ դերբայի կամ անցյալ կադարյալի հիմքի վրա, օրինակ՝ յաղթօղ (159), քիթօղ (159), իշխօղի (150), իշխեցօղ/իշխեցող (180), որոնք ունեն անկախ կիրառություն, հոլովվում են ի-ա վերջադրական հոլովմամբ, եզակի թվով, ստանում

8 Տե՛ս Գ.Ր. Վանցյան, Պարսկական քերականություն արեւելահայ լեզուի հայոց, Թիֆլիս, 1906, էջ 26-29, Մ. Աբրեղյան, Նայոց լեզվի փոխություն, Երևան, 1931, էջ 323-324, Գ. Զահուկյան, Նայոց լեզվի զարգացման փուլերը, Երևան, 1964, էջ 46 եւ այլք:

են հող, կատարում են գոյականին հատուկ պաշտոններ՝ ենթակա, որոշիչ, հատկացուցիչ և այլն. «...միշտ հզոր և յաղթող, ծովու և ցամաքի իշխեցող և րէր...» (156), «...ծովու և ցամաքի րիւթող և բոլոր Մօսկովու անպարտելի րէր մեծ կայսր Պեպր Ալէքսէիջ» (159), «Աստուածագոր մեծի ինքնակալ կայսեր Պեպր վէլիք իվրապօր, ծովու և ցամաքի աստուածապար իշխեցողի» (180): «Ապա՝ այս եկօղս հէնց պահեցին ներսն դուրսն...» (197):

Դիպրակում: Երբեմն նույն բառը հանդիպում է երկու գրությամբ, ինչպես՝ իշխեցող// իշխեցող (180):

Գրաբարի -եալ մասնիկով անցյալ դերբայը ամենահաճախն է հանդիպում նամակներում, ունի բազմաթիվ կիրառություններ, որը պայմանավորված է նրա իմաստային տարբեր գործառնություններով: Այն ձևաբանական նշանակություն ունի, կազմում է վերլուծական ժամանակաձևեր, ինչպես նաև անկախ կիրառությամբ կարող է դառնալ սպորոգյալ. «Զի ասիա թողթն, գոր յղեալ էիք առ Կաթողիկոսն Սիմէօն», «...որ թղթաբերն եկեալ րեսեալ շիջեալ գջահն եկեղեցոյ և առ Աստուած փոխեալ, իսկ և իսկ նորա գայն րեսեալ գանց արաբեալ գնացեալ ի սուրբ աթոռն Էջմիածին» (145):

Գրաբարի անցյալ դերբայից էլ միջին հայերենում եալ>ել պատմական հնչյունափոխության ճանապարհով առաջանում է վաղակարար դերբայը, որը նամակներում լայն գործածություն ունի: Այս դերբայի դերը սոսկ ձևաբանական է, մշտապես հանդես գալով եմ օժանդակ բայի հետ՝ բաղադրում է սահմանական եղանակի վաղակարար և անցյալի վաղակարար ժամանակաձևերը: Օրինակ՝ «Մանուսնող գրել ևս, թէ մեզ Պաքուն, Դաբբան-րէն խապար եկաւ, ձեզ գրել եմ» (171): «Նոցա գորքն կոտորել են, չեն կարացել առնիլ» (183):

Նանդիպում են նաև անցյալ դերբայով և կայ պակասավոր բայով վերլուծական բաղադրյալ ժամանակաձևերի հաճախակի կիրառություններ: Կայ-ն այս դեպքում օժանդակ բայի արժեք ունի՝ «Եւ գլուխ պարբիարզն մեր հանդերձ սուրբ աթոռովն Էջմիածնաւ մեծի նեղութեան մէջ մնացեալ կա. այլ և վանորայք և անապարք մեր խաւար և խանկարեալ կան » (166):

Բացի ժամանակային ձևեր կազմելուց, անցյալ դերբայը հանդես է գալիս նաև հարաբերականորեն անկախ կիրառությամբ. դառնում է որոշիչ, ձևի պարագա, կազմում է նաև դերբայական նախադասություններ: Օրինակներ՝ «...ի պարծանս տառապեալ ազգիս մերոյ» (160), «Թոյ քո կորացեալ պահեսցէ...» (160), «...և վասն մեր ծովացեալ մեղացն ամենայն խորհուրդ անկարար մնաց...» (161) և այլն:

Գրաբարյան այս ձևերի կողքին Զալալյանցը հաճախ գործածում է նաև -ած -ով բաղադրված և արդեն միջին հայերենում լայն կիրառություն ստացած հարակարար դերբայը, որն ինչպես նկատել է Ա. Այրաբեյանը՝ առաջացել է գրաբարյան -ած, -ուած հանգով՝ բայանուններից կամ ածականներից. «միայն թէ այս վերջինները բայէ անկախ են և անցեալի կազմութիւն չունին»⁹: Դերբայական այս կազմությունն իր հասարակական արեղն ունի արեւելահայ աշխարհաբարի բայական համակարգում՝ գործածվելով եւ՝ ժամանակային, եւ՝ անկախ կազմություններում: Որպես բայանվանական դերբայ՝ հարակարարն ունի նաև

⁹ Արսէն Այրաբեյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Երևան, 1987, էջ 100:

անվանական կիրառություն, նախադասության մեջ դառնում է որոշիչ, կարգաբանում է ձևի պարագայի պաշտոն, դառնում է սպորոգյալ: Այդ են վկայում նամակներում հանդիպող օրինակները «...յորժամ կիրակի օրերն պարարագ գնայի, եկած ժամանակն արևն էի, որ թագաւորական ապարանքէն շար իբմին վեր առած» (հարդիր բայ է. 146): «Այս է իմ կորած թագաւորական ապարանքը...» (147): «...տորա միջէն հանեցին մէկ փոքր կանաչ շալէ բարձ` խորով լիբն կարած. բացին արևանք` Գ (3) ոսկի ճռհարով ճղան, ներսն խորումն շինած ու կարած» (148), «Բայց քանզի ճանապարհքս փակած է, ոչ կարեմք որպիսութիւնք մեր հաւնապագ գրել...» (166):

Այսպիսով` քննությունից պարզվում է, որ գրաբարի չորս դերբայների կողքին Ջալալյանցը գործածել է նաև հարակապար, վաղակապար, անկապար դերբայները, որոնք վկայում են նամակների լեզվի վաղ աշխարհաբարին բնորոշ լինելու մասին :

բ) Եղանակաժամանակային ձևերի առանձնահատուկ դրսևորումներ:

Ջալալյանցի նամակներում բայերի եղանակաժամանակային ձևերի գործածությունը գրաբարյան է` գուցեղված միջին հայերենին և վաղ աշխարհաբարին բնորոշ դրսևորումներով: Տեղ են գրել վաղ արևելահայերենի բայական համակարգին բնորոշ բոլոր 5 եղանակները` սահմանական, ըղձական, պայմանական, հարկադրական, հրամայական: Սահմանականը ունի ութ հիմնական բաղադրյալ և մեկ պարզ ժամանակաձև:

Նայագիւրոյան մեջ երկար ժամանակ սահմանական եղանակի ներկա և անցյալ անկապար ժամանակների կազմությունը եղել է սահմանագալիչ հարկանիշ, որը հիմք է ծառայել հայերենի հին, միջին և նոր շրջանների առանձնացման և բարբառների ձևաբանական դասակարգման համար¹⁰: Նայրնի է, որ միջին հայերենում դրանք կազմվել են գրաբարի սահմանական ներկային և անցյալ անկապարին ավելացնելով կու մասնիկը, որն էլ դարձել է հայերենի հին և միջին շրջանների սահմանագալիչ հարկանիշը: Վաղ արևելահայերենին (ինչպես նաև ում ճյուղի բարբառներին) բնորոշ է անկապար դերբայով և օժանդակ բայի խոնարհված ձևերով կազմությունը: Ջալալյանցի նամակներում հանդիպում են և՛ գրաբարյան, և՛ միջինհայերենյան, և՛ աշխարհաբարյան կազմություններ: Դիպարկենք, որ գործածության հաճախականությամբ նամակներում գերազանցում են գրաբարյան ձևերը:

Այսպիսով` սահմանական ներկան արտահայտված է հետևյալ կաղապարներով.

Ա. գրաբարյան ներկայով` պարպիմք (144), արբիմ (145), խնդրեմք (150), ճգնիս (156), բերի (146), ցանկամք (157), փափակիմք (157), պայծառացուցին (157), գրէ (160), ունիս (162), նուիրեմք (159), մարուցանեմք (184), եկին (184), ողարկեցի (190), ընծայեմք (160), ժրեմք (181), բնակիմք (163), աղաղակեմք (160) և այլն:

Դիպարկում: ա) Երբեմն հանդիպում են բառեր, որտեղ գրաբարյան իմք-ը վերածվել է ինք-ի` եկինք (146)` փիս. եկիմք, մերեցինք (147)` փիս. մերեցիմք, ինչպես նաև` ամք-ը վերածվել է անք-ի, օրինակ` արեսանք (147)` փիս. արեսամք և այլն: Այս երևույթը բնորոշ է միջին հայերենին:

Բ. կու, կ մասնիկ + գրաբարյան ներկա` կու ծանուցանէ (159), կու վարձապրոյիս (160), կու հասանի (162) , կու գնայ (170), կու խլին (170), կու կարարեմք (171), կու սիրես (171),

¹⁰ Տե՛ս Լ.Նովսեփյան, ԺԳ դարի հայերեն ձևագրերի հիշարակարանների լեզուն, Երևան, 1997:

կուգայ (171), կու հոգամբ (173), կու գա (182), կու յաղթե (185), կանցանուի (185), կու լաւա-
նայ (190), կու վախենմբ (196), կու բերեմ (196), կու սահմանեն (197) եւ այլն:

Գ. -ում անկարար դերբայ + եմ օժանդակ բայ՝ առնում է (146), են գրում (164), ուզում է (170), են լսում (171), խոսում եւս (171), էք գրում (171), ուզում են (171), ասում են (182), գնում են (182), յուսահարում է (191), նուագում է (191): «Կափիւրանին կինն ծածուկ շար իբմին է առնում քաղաքումս» (146), «...դոցայ վաթի չեմ, կամ թե ում են լսում» (171), «մէկին հեր խօսում եւս, մէկն է խոսվում» (171):

Աւավածից կարելի է եզրահանգել. Բ եւ Գ կերերի համեմատությամբ՝ առավել հաճա-
խադէպ են Ա կերի՝ գրաբարձն ներկայով սահմանականի կիրառությունները:

Անցյալ անկարարի դիմային վերջավորությունները հիմնականում համապատասխա-
նում են գրաբարին: Ե լծորդության բայերի համար՝ եզակի թվի 1-ին դ.-էի՝ րեսնէի (146), կամէի (146), գրէի (147), 2-րդ դեմքով բառեր չեն վկայված, 3-րդ դ.- էր(եր), այր՝ բերէր (161), ունէր (161), ցուցանէր (163), կամէր (164), կայր (147): Գործածված է երկու բառ՝ հոգնակի թվի 1-ին դեմքով՝ էաք՝ անցուցանէաք (165), չունէաք (150): Նոգնակի երկրորդ եւ երրորդ դեմքերով գործածության օրինակներ չեն հանդիպում:

Ա լծորդության մեկ բայ է վկայված՝ եզակի 1-ի դեմքով՝ գնայի. «...յորժամ կիրակի օրերն պարարագ գնայի...» (146):

Կու մասնիկով անցյալ անկարարի միայն մեկ կիրառություն կա նամակներում՝ կուլի-
ներ. «Զմեր թուղթն եւ չափարն անպակաս անպակաս(sic) կուլինէր ի ծառայութենէ քումմէ» (166):

Ապառնի ժամականներն ավելի սակավ գործածություն ունեն եւ իրենց կազմությամբ
տարբերվում են գրաբարի համանուն ժամանակից: Դրանք կազմված են միջին հայերենի,
ուր ճյուղի բարբառների եւ աշխարհաբարի ձևով՝ -ոյ եւ -ու վերջավորություններով եւ օժան-
դակ բայի ներկա ու անցյալ ժամանակներով՝ գրելոյ եւ (145, 164), առնելոյ եւ (181), գնալու
եւ (164, 194), գալու էք (182, 195): Օրինակ՝ «եթէ րէր կամնացի եւ ցանկացի թուղթ գրելոյ
եւ ձեզ» (145): «...եթէ փութանակի մեզ օգնութիւն եւ թիկունս ոչ հասցէ ի հօրէդ, յարուկ
որ ամենայն ազգս Նայոց քրիստոնէից բնաջինջ առնելոյ եւ» (հարադիր բայի ապառնի
դերբայ. 181): Վաղակարար եւ անցյալ վաղակարար ժամանակաձևերը միջինհայերեն-
յան, բարբառային եւ աշխարհաբարյան կազմություններ են՝ ձևավորված -ել մասնիկով
վաղակարար դերբայով եւ օժանդակ բայով: Օրինակ՝ րեսնէլ եւ (146), արել էր (146), բացել
էր (147), գողացել էր (147), կորել է (147), րեսնէլ էր (161), ասել ին (146), ողարկել էի (146),
րեսնէլ ինք (147), արարել ենք (170), րավել էնք (170). Է-ն այսպէղ հավանաբար վրիպակ է,
առել ենք (170), էք գրել (171), էինք գնացել (186) եւ այլն:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում գրաբարայի կազմությունները,
որոնցով կազմվում են բաղադրյալ ժամանակաձևեր (վաղակարար-հարակարար ներկա
եւ վաղակարար-հարակարար անցյալ), ինչպէս՝ յղեալ էիք (144), ասացեալ եմք (151), լո-
ւեալ եմ (163), գրեալ եւս (164), ազտեալ եմք (165), պողոքեալ եմք (165), գրեալ էաք (185) եւ
այլն:

Նարակարար դերբայը եւս կազմությամբ միջին հայերենին եւ վաղ աշխարհաբարին

բնորոշ դրսևորում ունի՝ եկած(է) (146), վեր առած(է) (իմա՝ վերցրած. 146), գրած էր (147), մեքած(է) (147), փակած է (165), նեղացած ես (171), նաքած է (185), լսած էք (193) և այլն:

Անցյալ կարարյալը՝ որպես սահմանական եղանակի պարզ ժամանակաձև, որոշ առանձնահատկություններ է դրսևորում: Ունի գրաբարյան և աշխարհաբարյան կազմություն: Վերջավորությունների գործածությունը, կարարյալի հիմքի կազմությունը միօրինակ չեն: Նույն բայը կարող է խոնարհվել եւ՝ արմարական, եւ՝ ցոյական հիմքով, եւ՝ ներգործաձև, եւ՝ կրավորաձև: Գրաբարին հատուկ է նախահավելվածով հանդիպում են՝ եհաս (182) և էառ (173) բայերը:

Անցյալ կարարյալի հիմքի գրաբարյան եաց ածանցի դիմաց առավել հաճախ գործածվում է հնչյունափոխված եց ձևը՝ մարնեց (146), բռնեցի (146), գրեցինք (147), ծնեց (166) և այլն: Միաժամանակ աշխարհաբարյան այս ձևերին զուգահեռ գործածված են նաև գրաբարյան բայաձևեր, օրինակ՝ եղեւ (151), նաեւ՝ եղաւ (147), եհաս (150, 182), նաեւ՝ հասաւ (161), եկի (163), ծանոյց (150), կարեաց (157), աւերեաց (161) և այլն:

Դիարկում : ա) անցյալ կարարյալի հիմքի կազմության շեղումներ, ինչպես՝

կորաւ (148), փիւ. կորեաւ՝ ի թույլ բաղադրիչի անկում:

բ) կրավորաձև խոնարհման դիմային վերջավորությունների գործածում ներգործաձևի փոխարեն՝ հասաւ (164, 170) փիւ. եհաս: Գալ անկանոն բայն անցյալ կարարյալի եզակի թվի 3-րդ դեմքում սրանում է կրավորաձև վերջավորություն՝ եկաւ (182), փիւ. եկն, իսկ հոգնակի թվի 2-րդ դեմքում՝ եկինք (150), փիւ. եկիք:

գ) Տալ անկանոն բայի անցյալ կարարյալի եզակի թվի 1-ին դեմքը վկայված է քուի/քովի (146) ձևով, փիւ. քուայ կամ եքու, իսկ ժխտական խոնարհումը վկայված է համապատասխանաբար չքուիք (187) ձևով:

դ) Տեսնել բայը ներգործաձև խոնարհման հոգնակի 1-ին դեմքում դրված է քեսանք (147) ձևով, փիւ. քեսաք:

Նայքնի է, որ գրաբարի ստորադասական եղանակն արդեն իսկ միջին դարերից դուրս էր մղվել՝ իր փոքր գիջելով ըղձական, պայմանական, հարկադրական եղանակներին, որոնք արտահայտում էին այդ եղանակի առաջին և երկրորդ ապառնիների իմաստը: Զալայանցը նամակներում գործածել է հիմնականում իր ժամանակի աշխարհաբարի սահմանական եղանակի ապառնի, ըղձական, պայմանական և հարկադրական ժամանակները: Նկատելի է, որ երբեմն քուրք փալով գրաբարին՝ Զալայանցը գործածել է նաև գրաբարյան առաջին և երկրորդ ապառնիները, որոնք խորթ են վաղ արևելահայերենի բայական համակարգին: 1-ին ապառնի՝ հանգիցե (144), ելանիցե (156), ելանիցես (161):

2-րդ ապառնի՝ զարդարեսցե (144), հասցե (145), օրհնեսցե (145), մքցե (157), ցուցցե (157), արասցես (159), գթասցիս (150), ծանիցե (163), ձօնեսցի (156), նուիրեսցի (156), ծաւուսցուք (151), յղեսցես (164), գրեսցես (164) և այլն:

Նարկադրական եղանակը ժամանակակից հայերենին բնորոշ դրսևորում ունի՝ կազմված է պիտի+ըղձական եղանակի ապառնի, պիտի+ըղձական անցյալ կաղապարներով: Օրինակ՝ «...գնաց Շամախի, որ երկուց թագաւորաց հրամանաւ քեզնի սնօր պիտի հասարարեն...» (197), «դորա կողմանէ պիտի որ խարջի չքալու համար չգրես» (190), նաեւ՝ պիտի գրէք (171), պիտի գրես (171), պիտի լինիլ (185), պիտի փչացնենք (186), պիտի գնամք (186),

պիտի բռնէք (193), պիտի հասնի (196), պիտի խրապես (197), պիտ են ասել (պիտի ասեն. 164): Այս վերջին ձևը գործածվել է գրաբարում, կա նաև բարբառներում:

Ըղծական եղանակը կազմությամբ համընկնում է սահմանականի գրաբարձեւ ներկա եւ անցյալ անկարար ժամանակներին եւ փաթեթավորում է միայն նախադասության մեջ: Դրանք, լեզվի զարգացման ընթացքում զրկվելով իրենց նախկին խմաստից, ձևոր են բերել նոր խմաստ, այն է՝ ցանկալի, կարարելի գործողություն կամ եղելություն: Օրինակ՝ «Յեպոյ աշտ փանջանք փուի կամէի որ սրբին կրակ փամ» (146), «...եւ ապրիշումի փեղաց եւ ուսփայոց, որ հեկրն բերէր, եւ այլ բագում եւ յոյվ օգտակար բան շար ունէր թագաւորական...» (161), նաեւ՝ ըսպասեմ (161), ցանկամք (156), հայցեմ (157), շնորհի (160), խլի (170), խնդրեմ (161), կան (161), կամիմ (162), գիտես (164), իմանաս (164), գորացան (166), պահես (174), գիտէ (190) եւ այլն:

Պայմանական եղանակը կազմվում է ըղծական եղանակի ժամանակաձեւերով եւ կու, կ եղանակիչներով եւ համընկնում է միջին հայերենի եւ «կը» ճյուղի բարբառների սահմանական եղանակի ներկա ժամանակաձեւերին: Դրանք նամակներում սահմանափակ կիրառությամբ են հանդիպում: Օրինակ՝ «...այսպես գրես լավ կեղնի» (164), «որ գմեզ ազգաւիմբ կբառնան ի միջոյ թշնամիք խաչին Բրիստոսի» (165), «Եթէ սակս քրիստոսական հաւաքոյ է իբրեւ գմեծն Կոստանդիանոս եւ Թեոդոս եւ Դրոսար կովարձարարոյիս եւ փառավորիս ի յաստուծոյ...» (161) եւ այլն: Պայմանական եղանակի բարբառային դրսևորումներ են կերթա եւ կիլիմիմբ բայերի գործածությունը՝ «...թէ որ մէկ ամիս ետացաւ, էս ձեռաց կերթա...» (196), «Թէ որ գորբն Շամալի լինի, մեր այս մէջս կիտակեմք, որ աստուծով կիլիմիմբ գնալ թագաւորի գորաց մէջն...» (187) եւ այլն: Նկատելի է, որ այս բայաձեւերն արդեն որոշակի արտահայտում են արդի հայերենի պայմանականի հարաբերությունը:

Տրամայական եղանակը նամակներում դրսևորված է գրաբարափայ կադապարներով. բուն հրամայականը (հրամայական եղանակի ներկան) ներգործածել խոնարհաման եզակի թվի 2-րդ դեմքը կազմվում է անցյալ կարարյալի հիմքից: Արմատական հիմքը գործածվում է շեշտի փակ, օրինակ՝ լե՛ր ողջ (164), իսկ ցոյական հիմքը՝ ց-ի անկումով՝ կառավարեա՛լ (164), հոգնակին կազմվում է -էք վերջավորությամբ՝ կացէ՛ք (145), ողարկէ՛ք (181): Կրավորածել խոնարհման եզակի 2-րդ դեմքը կազմվում է -իր վերջավորությամբ՝ ծանի՛ր (197), իսկ հոգնակին՝ -այք եւ

-արուք վերջավորություններով՝ ծաներո՛ք (144), լերո՛ք (145):

Դիտարկում: ա) բռնէ՛ք (192, 193), իմանէ՛ք (196) բայերի հոգնակի հրամայականը կազմված է ներկայի հիմքից՝ -էք վերջավորությամբ. սա հատուկ է Արարարյան եւ Ջուղայի բարբառներին: բ) Կեցի՛ր (162) բայը կազմվել է արդի հայերենի նմանությամբ՝ -իր -ով:

Նորդորական հրամայականը (հրամայական եղանակի ապառնի) եւս գրաբարափայ է. կազմվում է 2-րդ ապառնի ժամանակի հոգնակի թվի 2-րդ դեմքից, որի վերջին ք հնչյունը փոխարինվում է ր-ով: Ջալալանցի նամակներում հրամայականի այս ձևը մեկ-երկու անգամ է հանդիպում. այսպես՝ արասջի՛ր (162), իմասջի՛ք (181):

Արգելական հրամայականը կամ հրամայականի ժխտականը վաղ աշխարհաբարում կայունացված չէր եւ հանդես էր գալիս կա՛մ գրաբարյան, կա՛մ բարբառային կազմությամբ: Եզակիի դեպքում կազմվում է -մի մասնիկով: Օրինակ՝ մի՛ գրեր (171), մի՛ առնէք (183), մի՛ արտաքսեր (186):

Դիպրարկում: ա) Մեկ բայ հանդիպում է բարբառային ձևով՝ միք+ անորոշ դերբայ կաղապարով՝ միք երանալ (192): բ) Ուշագրավ դրսևորում ունեն մի՛ արասցե (163), մի՛ խնայեսցես (164) բայաձևերը, որոնք կազմված են գրաբարյան երկրորդ ապառնի ժամանակաձևով և -մի՛ արգելական մասնիկով:

Ջալալյանցի նամակներում կարելի է առանձնացնել ժխտական խոնարհման կազմության երեք տեսակ.

1) չ, չէ, չի ժխտական մասնիկ+ բայաձև, որով արտահայտված են ներկայի, անցյալ կարարյալի, ըղձական եղանակի ժխտական խոնարհման բայերը, ինչպես՝ չկարացար (162), չգիտեմ (163), չկայր (146), չունեմ (147), չունեար (150), չեղև (150), չէ գրուիլ (161), չգիտեմ (163), չանկանի (163), չեղար (163), չունիմք (164), չէ փվել (171), չէ լինիլ (181), չբուրիք (187), չէ գալիս (181) և այլն: Բարբառային ազդեցության հետևանք են չի մասնիկով գործածությունները՝ չի կաս (չգաս. 170), չի ողարկես (չողարկես. 170), չի կնայ (չի գնա. 170), չիլա (190), չի քեթաշեք (191), ինչպես նաև ժխտական մասնիկի հետադաս կիրառությունները՝ կարօղ չէ (163):

2) ոչ ժխտական մասնիկ+ բայաձև կաղապարով կազմված է սահմանական եղանակի գրաբարյան ներկայի և ըղձական ապառնի ժամանակաձևերի ժխտական խոնարհումը: Օրինակ՝ ոչ լինի (161), ոչ փեսանեմք (165), ոչ կարեմք (165), ոչ հասանիցեն (166), ոչ ունելով (194) այլն: Ագուլիսի, Ղարաբաղի բարբառների ազդեցություն կարելի է համարել ոչ մասնիկի հետադաս գործածությունները՝ լսեք ոչ (164), փանեն ոչ (170):

3) չ+օժանդակ բայ+դերբայ կաղապարով՝ չեմք կարօղ (163), չեք փեսնում (171),

չեն կարացել (182), չեն փեսնում (193), չեք ողարկիլ (185), կարիլ չեմք (182), փեսած չեմ (195) և այլն:

Երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերը նամակներում սակավ կիրառություն ունեն: Գրաբարում դրանք կազմվում էին անցյալ և ապառնի դերբայներով և եմ, լինիմ բայերով (այդ մասին փնս վերևում): Նամակներում հանդիպում է ապառնի դերբայով և եմ օժանդակ բայի առաջին ապառնիով կազմված գրաբարի ստորադասական եղանակի մի գործածություն՝ «...եթե զգալուսք թոյ յամեղոց իցե» (166), և մի դեպք՝ սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի ժամանակով՝ «...վերջն աստուած գիտէ, թե՛ զինչ լինելոց է» (197):

Պարզառական բայերը արտահայտված են երկու ձևով՝ ածանցմամբ և նկարագրական եղանակով:

Նկարագրական եղանակով պարզառական բայերն կազմված են անորոշ դերբայի և փայ բայի հարադրությամբ: Նամակներում նմանափայ երկու բայաձև է հանդիպում, ինչպես՝ խնամել փայ (160) և մերիլ փայ (163):

Ածանցմամբ գործածել է -ոյց (ուց), -ուցան գրաբարյան ածանցներով կազմություններ: Այսպես՝ ծանոյց (150, 195), պայծառացուցին (147), մահացուցին (161), կուրացուցին (164), հասուցանես (174), մարուցանեմք (185), հասուցին (186), մարուցանել (195):

Դիպրարկում: Ժողովրդախոսակցական լեզվի ազդեցությամբ խօսել բայը ստացել է խօսացնել- խօսացրիք (186) պարզառականը՝ -ացն ձևով:

Անկանոն բայերից նամակներում գործածված են՝ առնել, լինել(իմ), գալ, լսել, ունել,

դնել, քալ, ճանաչել (դրանց դրսևորած որոշ շեղումներ փնս վերևում): Դնել բայը եզակի թվի առաջին դեմքում հանդես է գալիս ում ճյուղի բարբառներին հափուկ քրի (//դրի, դրեցի. 147) ձևով: Անկանոն բայերն ունեն հիմնականում գրաբարին, ապա՝ ում ճյուղի բարբառներին, նաև՝ միջին հայերենին հափուկ դրսևորումներ: Օրինակ՝ «Բ (2) անգամ դամչի քալ քուի, Գ (3) անգամ սրբին կրակ քուի» (146): «Ապա որ եկինք Նիագովայ քուին...» (146): «Եւ դարձեալ զայս ծանիցէ սիրելիութիւն քոյ...» (163): «Թէպէտ երբեմն երբեմն յուսափրական բանս եւ յորս յուրս...» (165) եւ այլն:

Նամակներում վկայված գրաբարի պակասավոր բայերից Ջալալյանցը գործածել է եւմ, գու, պարքել եւ կայ/կա բայերը, որոնք հեղափոխի դրսևորում ունեն: Գու բայը գրաբարածէ է խոնարհված եւ հանդիպում է եզակի կիրառությամբ՝ ոչ գոյ (161):

Պարբել բայը նամակներում արտահայտված է ներկա ժամանակով եւ հոգնակի թվով՝ պարքիմք (145), պարքիք (145), մինչդեռ միջին հայերենում այն ուներ միայն եզակի կիրառություն, որն աստիճանաբար դուրս է մղվել գործածությունից: Եզակի երկրորդ դեմքի կիրառության մի դեպք կա միայն՝ պարքիս խնամել (160):

Եայ բայը եւս գրաբարածէ է, ունի ներկայի եւ անցյալ անկարարի միայն 3-րդ դեմքի կիրառություններ՝ կայ/կա (160), կայր (148, 174), կան (160) եւ ժխտական խոնարհման չկայ/չկա (174, 183) ձևով:

Եւմ բայը հանդիպում է ներկա եւ անցյալ հեղափոխյալ հարացույցով՝ եւմ, եւ/էս, է, եւք, եւք, եւն, էի, էիր, էր, էիք ժխտական խոնարհման դեպքում՝ չեւ, չէի, չի, չէ: Նանդիպում է նաև 1-ին ապառնիի եզակի 3-րդ դեմքը՝ իցէ:

Դիպարկում: ա) Օժանդակ բայի անցյալ ժամանակում հանդիպում են է-ի սղման դեպքեր, ինչպես՝ ասել ին (146), բանում ինք (147), քեսել ինք (148), եկել ին (171) եւ այլն, որն, ըստ Ա. Ղարիբյանի¹¹, հանդիպում է Մուշի, Ալաշկերտի, Վանի, Նաճնի, նաև՝ Ջուղայի ու Նոր Ջուղայի բարբառներում:

բ) Գրաբարյան (եւք, էք, ես, էր եւ այլն) եւ բարբառային (ի, ինք, ին) ձևերին գուգահեռ նկարելի են եւք եւ էինք քարբերակները, որոնք հափուկ էին միջին հայերենին եւ բարբառներին եւ նույնությամբ անցել են աշխարհաբարին:

Ամփոփենք՝ բայի եւ նրա խոնարհման համակարգի ուսումնասիրությունից ու վերլուծությունից պարզ դարձավ, որ իր նամակները Եսայի Նասան-Ջալալյանցը գրել է ազարոճով՝ քուրք քալով հարկապես ժողովրդախոսակցական լեզվին եւ բարբառներին, երբեմն էլ հարազատ է մնացել գրաբարի խոնարհման համակարգին: Լեզվական նույն երևույթների բազմաձև արտահայտելը բնորոշ էր վաղ աշխարհաբարին եւ հեղափոխար նամակներն էլ գրված են իր ժամանակի լեզվով: Դրանք բացահայտում են նաև լեզվի զարգացման քվյալ քուլին բնորոշ ընդհանրություններն ու քարբերությունները:

¹¹ Տե՛ս Ար.Ղարիբյան, Նայ բարբառագիտություն, Երևան, 1953: